



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

11.08.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ՍՑ-29/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Արման Արշակյանին (ՀՎՀՀ՝ 79814229) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-29/16 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2016թ. թիվ 1/73-3/4339-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Կենտրոնի 11.03.2016թ. թիվ 01/04.1/895-16 և 27.07.2016թ. թիվ 01/04.1/2853-16 գրությունները, Ընկերության 16.05.2016թ. գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության 11.05.2016թ. թիվ 555 տեղեկանքը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 02.08.2016թ. թիվ 6-1/23120-16 գրությունը, ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-29/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 09.08.2016թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 05.11.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/9759-15 գրության հիման վրա, 09.02.2016թ. թիվ 1/73-3/4339-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Արման Արշակյանին (այսուհետ նաև՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 11.03.2016թ. թիվ 01/04.1/895-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2016թ. թիվ 1/73-3/4339-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է Ա/Ձ Արման Արշակյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ, Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից **մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն Ա/Ձ Արման Արշակյանի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 16.10.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2016թ. թիվ 1/73-3/4339-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Արման Արշակյանի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ պահանջել է Ա/Ձ Արման Արշակյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

2. Ա/Ձ Արման Արշակյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 12.02.2016թ. թիվ 01/04.1/426-16 գրությամբ դիմել է Ա/Ձ Արման Արշակյանին:

Ա/Ձ-ն 16.05.2016թ. Կենտրոնին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ա/Ձ Արման Արշակյանը **2015թ. հոկտեմբերի 16-ի դրությամբ** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ունեցել է միայն սոցիալական վճարի պարտավորություն, որը հարկային պարտավորություն չի համարվում՝ կից ներկայացնելով վերոհիշյալ փաստը հավաստող ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության 11.05.2016թ. թիվ 555 տեղեկանքի պատճենը:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, 05.11.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄԶ-1/9759-15 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է, որ Պատվիրատուի կողմից Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Արման Արշակյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 16.10.2015թ., Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 58.861 ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ Պատվիրատուն վերը նշված գրությանը կից տրամադրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

4. ՍՑ-ԳԲԽ-29/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 09.08.2016թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ Ա/Ձ Արման Արշակյանին (ՀՎՀՀ՝ 79814229) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

5. ՍՑ-ԳԲԽ-29/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Արման Արշակյանին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կողմից մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԾՁԲ-15/11-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Արման Արշակյանը:

2. Ա/Ձ-ն հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (16.10.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 21.10.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Արմանի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Արման Արշակյանը 2015թ. հոկտեմբերի 16-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 58.861 ՀՀ դրամի չափով:

5. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.03.2016թ. թիվ 01/04.1/895-16 գրությամբ արձանագրել է Ա/Ձ Արման Արշակյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել Նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

6. Ի պատասխան Կենտրոնի 11.03.2016թ. թիվ 01/04.1/895-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ պահանջել է Ա/Ձ Արման Արշակյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

7. Ա/Ձ-ն 16.05.2016թ. Կենտրոնին ուղղված գրությամբ հայտնել է, որ **2015թ. հոկտեմբերի 16-ի դրությամբ** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ունեցել է միայն սոցիալական վճարի պարտավորություն, որը հարկային պարտավորություն չի համարվում՝ կից ներկայացնելով վերոհիշյալ փաստը հավաստող ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության 11.05.2016թ. թիվ 555 տեղեկանքի պատճենը:

8. Կենտրոնը 27.07.2016թ. թիվ 01/04.1/2853-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել Ա/Ձ Արման Արշակյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 16.10.2015թ. ունեցե՞լ է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

9. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 02.08.2016թ. թիվ 6-1/23120-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ հիմք ընդունելով Գորիսի ՀՏ-ի տրամադրած տեղեկատվությունը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 29.07.2016թ. դրությամբ՝ Ա/Ձ Արման Արշակյանը **16.10.2015թ. չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:**

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-29/16 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և իրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԾԶԲ-15/11-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին Ա/Ձ-ն մասնակցելու նպատակով 16.10.2015թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (16.10.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուի, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Արման Արշակյանը 2015թ. հոկտեմբերի 16-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 58.861 ՀՀ դրամի չափով:

Խորհուրդն արձանագրում է, որ Ա/Ձ Արման Արշակյանը ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության 11.05.2016թ. թիվ 555 տեղեկանքի պատճենը, ըստ որի Ա/Ձ-ն 16.10.2015թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Վերոհիշյալ փաստը հաստատվել է նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 02.08.2016թ. թիվ 6-1/23120-16 գրությամբ, որի համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 29.07.2016թ. դրությամբ Ա/Ձ Արման Արշակյանը **16.10.2015թ. չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:**

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության 11.05.2016թ. թիվ 555 տեղեկանքը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 02.08.2016թ. թիվ 6-1/23120-16 գրությունը, համաձայն որի՝ Ա/Ձ-ն **16.10.2015թ.-ին (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Արման Արշակյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


ՀՀ ֆինանսների նախարարության 17.03.2016թ. թիվ 1/73-1/9994-16 գրությամբ Ա/Ձ Արման Արշակյանին (ՀՎՀՀ՝ 79814229) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝




Հայրապետյան Գևորգ

Անդամներ՝



Խաչատրյան Գևորգ



Հակոբյան Ռաֆիկ